

Հաշմանդամության թեմայով 1-ին հանրապետական մրցույթի մրցանակակիրների հոդվածները

Մերրի Կյուրեղյան, Սպիտակի շրջանի Շիրակամուտ գյուղ
Առաջին մրցանակ

...Մի տաք գարուն և մի պաղ հուշ...

Թափվե՛ք կաթիլներ, թրջե՛ք ինձ, տե՛ղն է, թրջեք այնպես, որ մոռանամ զգացումը
այն բոլոր մեղքերի, որ գործել եմ կյանքում՝ կամա, թե ակամա...

...Գիտակցում եմ, որ չնչին բառապաշարով և լրագրողական իմ «անփորձ
գրիչով» ես չեմ կարող մրցակցել հայտարարված մրցույթում, ուստի թույլ տվեք զե՛րծ
մնալ բարդ ու ստեղծագործական «հզոր» բառերից և պարզապես պատմել մի փոքրիկ
պատմություն: Այսպիսով, ազատվելով «կապանքներից» և ավելորդ լարվածույթ-
յունից, ես կպատմեմ այն, ինչ եղել է իրականում և կպատմեմ ամենայն անկեղծությամբ
ու պարզությամբ...

«...Ի՞նչ հաճելի է, սիրում եմ գարնան վերջին ամսվա արևը: Այն արևը, որ դեռ չի
այրում, այլ այնպե՛ս է ջերմացնում: Այն արևը, որ ստիպում է խենթություններ անել.

Իսկ ուղիղ դիմացիս մայթում մանկական խաղասրահ է. չմտնե՛մ: Հե՛նց
մանկական երջանիկ ու պայծառ հայացքներով էլ կգարդարեմ առավոտս...»

Լաբիրինթոս, աշխույժ երաժշտություն և երեխաներ՝ անեղծ ու հրաշք: Խաղում
են, վազում, տեսեք ինչպե՛ս են հաղթահարում փորձությունները, իջնում սղարանով և
խորտակվում անվերջանալի ու հեքիաթային գնդակների մեջ: Հենց այստեղ՝ հրաշք-
ների ու հեքիաթների անվերջության մեջ էլ տեղի ունեցավ այն, ինչը դարձավ այսօրվա
իմ նյութը գրելու պատճառը:

«Խաղասրահում փոքրիկ Հայկի համար նույնպես այդ օրը դարձավ անմոռանալի
բայց ոչ հեքիաթային: Լաբիրինթոսի դռանը հենված փոքրիկի համար անհաս երազանք
դարձան սղարանն ու գնդակները. նրան այդպես էլ չթույլատրեցին մասնակից
դառնալ հեքիաթին»: Ահա պատմությունը, որի մասին այդքան խոսեցի և որը սկսվեց,
զագացավ և, ... չգարմանա՞ք... ավարտվեց:

Իսկ իմ կյանքում Հայկը մնաց հուշ, շատ «պաղ հուշ»: Հայկը ծնվել էր մեկ թևով և
մեկ կիսաթևով, նրա երկրորդ թևի վրա թաթիկ չկար: Խաղասրահի
խաղավարը, նկատելով այդ արգելեց տղային ներս մտնել:

Ատում եմ այդ խաղավար կոչվածին, ատում եմ ամբողջ էությանբ: Նա իր
անխոհեմ քայլով խրվեց մանկական մի գուլպա սրտում և կոտրեց այն: Տեսնեք այդ
աղջիկը իր կյանքում տեսե՛լ էր հաշմանդամության խնդիր ունեցող երեխա, որևէ բան
գիտե՛ր այդ խնդրի մասին. կարևոր չէ, նա իրավունք չունեիր այդպես վարվելու: Նրանից
դաժան տեսնեք էլ կա՞ աշխարհում: Հուսով եմ՝ մի օր Աստված կների նրան, իսկ
Հայկին մեծ բախտավորություն ու օրհնություն կտա կյանքում: Ասում են՝ երեխաները
չեն մոռանում մանկության մեջ տպավորված դեպքերը, բայց հուսով եմ՝ Հայկը մի օր
կմոռանա խաղավարին ու խաղասրահը:

Այսպիսին էր իմ պատմությունը:Իհարկե, ինձ թույլ չեմ տա նյութս անվանել հոգված և նույնիսկ չգիտեմ էլ ինչու համարձակվեցի ներկայանալ այսպիսի մի մեծ մրցույթի:Հուսով եմ՝ կներեք հանդգնությանս...ի՞նչ արած,ինձ էլ Աստված այսպես է ստեղծել՝ խենթ ու ռոմանտիկ:Գիտե՞ք ես սովորում եմ լրագրության բաժնի արդեն երրորդ կուրսում.դեռ առաջին կուրսից հիշում եմ դասախոսներին խորհուրդներն ու դասերը.»_Մերրի «Ժուռնալիստիկան» չի հանդուրժում այդ աստիճան զգասմունքայնությունը,փորձիր գրելուց հետո մի քանի անգամ խմբագրել ինքդ՝քեզ,մինչև հասնես ցանկալի արդյունքին»:

Այս նյութը գրելիս հերթական անգամ հիշեցի «կարևոր խորհուրդը», բայց այսօր որոշեցի անկեղծ մնալ,հավատարիմ՝ գրելու ի՛մ սկզբունքներին:

Հետգրություն

Ուզում եմ մի գաղտնիք ասել.ինչքան էլ փորձեցի չասել,բայց ախր չեմ կարող:Խոստանում մ եք,որ ոչ ոք չի իմանա...

Խաղավարը,որի մասին պատմեցի, ես եմ,այո հե՛նց ես՝ Մերրի Կյուրեղյանս:Եկել եմ Մպիտակի շրջանի՝ Նալբանդ,այժմ՝ Շիրակամուտ գյուղից:Այստեղ սովորում եմ և ուսմանս համատեղ՝ աշխատում եմ SFC արագ սննդի ցանցի մանկական սրահներից մեկում՝ որպես խաղավար:Յոթ ամիս է,ինչ աշխատում եմ:Մայիսի 15-ն էր, երբ եկավ Հայկը,իսկ ես... այդ օրից նրան չեմ տեսել:Ես պարտավոր էի ընդունել և ինքս օգնել տղային, դժվարությունների դեպքում,բայց ես ծուլացա ,ազատեցի ինձ ավելորդ»հոգսից» և փոքրիկին դարձրի ծուլությանս զոհը:Այդ օրը ոչ ոք չիմացավ՝ ինչ կատարվեց իմ սրտում,որտեղ ոչինչ չի փոխվել մինչ այսօր:Չեմ տեսել Հայկիս որ քավեմ մեղքս,փոխարենը ամեն բացվող օր խնդրում եմ Աստծուց,որ պահպանի Հայկիս,ուր էլ լինի նա:

«Տեր, թող Հայկս բասխտավոր ու երջանիկ մարդ դառնա կյանքում,օրհնիր նրա ճանապարհը,իսկ ինձ՝ տխուր խաղավարիս,ընծայիր մի չքնաղ անձրև...»

...Մի տաք գարուն և մի պաղ հուշ...

Դե կաթիլներ՝ մաքուր - անուշ,

Համբուրեք ինձ այդպես անեղծ,այդպես քնքուշ...

Է՜՛յ,սպասի՜ր,այդ ու՛ր այդպես, չե՞ որ արդեն ափիս մեջ ես

Ինձ պես դու էլ մի քիչ խենթ ես և ոչ մեկին չեմ տա ես քեզ...

Վերջերս արբանյակային ալեհավաքի միջոցով արտասահմանյան մանկական հաղորդում դիտեցի, որը վարում էին սպիտակամորթ, սևամորթ, ասիացի երեխաներ և սայլակի մեջ նստած հաշմանդամ երեխա: Այսինքն՝ այնտեղ կարողանում են մանկուց սովորեցնել ճիշտ ընկալել, որ բոլորը հավասար չափով մարդ են և հավասար չափով իրավունքներ ունեն:

Ես երբեք չեմ բարձրաձայնել այն բոլոր միջադեպերը, որոնց հետ առնչվել եմ, որովհետև մտածել եմ, որ անիմաստ է, որ ոչինչ չի փոխվի, որ կրթված ու զարգացած գերդաստանից սերված, կրթված ու զարգացած կին լինելով հանդերձ՝ նորից պիտի ցածրացնեն ու ես նորից պիտի հանդուրժեմ դա (որդուս համար, իհարկե), իսկ արդյունքում՝ «ձեռքս բռնող չի լինի»:

Հիմա առիթ է հանդիսացել և ես կարող եմ ներկայացնել, թե ինչպես են խախտվել իմ ու իմ տաս տարեկան հաշմանդամ որդու իրավունքները:

Առաջնեկս աղջիկ էր և ես երագում էի տղա ունենալ:

Տաս տարի ընդմիջումից հետո, 34 տարեկան հասակում, տղա ունեցա ու հենց հիվանդանոցից սկսած բախվեցի, այդքան ծեծված արտահայտությամբ ասած, «դառը իրականության» հետ:

Որդիս ծնվել էր նորմալ վիճակում: Երրորդ օրվա գիշերը վատացավ, ասացին՝ ջրազրկվել է: Մինչ օրս այդպես էլ չհասկացանք, չասացին, թաքցրեցին, խաբեցին... թե ջրազրկվելու պատճառը որն էր և ինչու:

Ախտորոշում չտվեցին:

Սա իրավունքի խախտում չէ՞ր:

25օր այլ հիվանդանոցում կաթիլային և այլ բուժումներ ստանալուց հետո որդիս փրկվեց (գնահատում եմ ու շատ շնորհակալ եմ), եկավ գիտակցության ու տարանք տուն: Այդտեղից էլ ախտորոշում չտվեցին: Կներեք, իհարկե, «շունը շան ոտ չէր տրորի»:

Սա իրավունքի խախտում չէ՞ր:

Ու սկսվեց մղձավանջը...

Թաղային բժշկուհին երեխայի մոտ տեսնելով պատահածի հետևանքները, մեզ խնայել էր՝ ոչինչ չէր ասել (դա հետո իմացանք, երեխան փոքր էր՝ մենք չէինք նկատում ու չէինք հասկանում):

Ի՞նչ բժիշկ է, ի՞նչ հոգեբան:

Սա իրավունքի խախտում չէ՞ր:

Մի քանի ամիս անց հասկացանք, որ որդուս մոտ առողջական լուրջ խնդիրներ կան՝ մեջքը, գլուխը չէր պահում, մկանների մի մասը ձգված էր, մյուս մասը՝ թուլացած, նյարդերը այն աստիճանի էին «կռկված», որ ձեռքերն ու ոտքերը չէին աշխատում, կանգնելը, նստելը, քայլելը, խոսելը բացառվում էր և նման բաներ... նա անընդհատ պառկած էր:

Հասկացանք, որ բուժման համար նախ անհրաժեշտ է ախտորոշում:

Չմնաց մի այնպիսի «քիչ թե շատ անունով» բժիշկ, որին այցելած չլինեինք, բայց բոլորի տված ախտորոշումները տարբեր էին՝ ուղեղի կենտրոններն են վնասված, մանկական եզակի կաթված է, բացիլից արյան վարակում է ստացել, արգանդում է

վնասվել՝ մոր տարբեր հոգեվիճակներից, անհրաժեշտ է ոտքերի կրունկները վիրահատել՝ քայլելու համար(աբսուրդ), անհրաժեշտ է գլխում տեղադրել խողովակի նման մի բան՝ դեպի կոկորդ՝ հեղուկի դուրս բերման համար(ի՞նչ հեղուկ), բայց երեխան չի դիմանա՝ կմնա վիրահատական սեղանին (այս մեկը չիմանայեց), ուղեղում հեմատոմա կա՝ անհրաժեշտ է վիրահատել(երբ **ЯМР**-ի տվյալները տեսավ, որ ուղեղը վնասված չէ՝ մեզ համոզում էր, որ դա հնարավոր չէ՝ ևս մի հոգեբան) և այլն և այլն... Ձեզ և ինձ խղճալով դադարեցնում եմ թվարկել:

Բժիշկների և նրանց նշանակումների համար , երևի, պատկերացնում եք ինչ ֆինանսական միջոցներ են ծախսվել ու ապարդյուն՝ էական ոչ մի փոփոխություններ չեղան երեխայի մոտ, իսկ ծնողների հոգեբանական խնդիրների մասին չեմ ուզում խոսել:

Այս ամենը իրավունքի խախտում չէ՞ր:

Ի վերջո, հաշմանդամի կարգավիճակ և թոշակ ձևակերպելու համար, փաստաթղթերում ախտորոշումը գրվեց որպես **ДЦП** ու որդիս համարվեց մանկուց հաշմանդամ:

Որդուս համար վերևում Աստված, ներքևում՝ մայր: Ի հեճուկս բոլորի՝ Սահակիս պետք է ոտքի կանգնեցնեմ ու ձեռքը բռնած հերթով-հերթ տանեմ նույն բժիշկների մոտ, որոնց պատճառած հոգեբանական «վերքերը» չեն սպիանում:

Սկսեցինք կենտրոննալ բուժական ֆիզկուլտուրայի, մերսումների, բիոտոկերով բուժման վրա: Չեմ ուզում նշել, թե ինչերի միջով անցանք այդ ընթացքում՝ բացի մեկից.

Երբ համապատասխան փաստաթղթերով և ուղեգրով դիմեցինք -----ի վերականգնողական կենտրոն, ասացին. «Հերթ պետք է կանգնեք, գուցե 2-3 տարի տևի»: Իսկ երբ վճարի մասին խոսեցինք՝ հերթ կանգնելը բացառվում էր:

Սա ի՞նչ էր: Ինչևէ:

Երկարատև ու տանջալից բուժումների արդյունքում, 4-5տարեկան հասակում, Սահակիս ոտքերը սկսեցին աշխատել, մեջքը սկսեց պահել:

7 տարեկան հասակում սկսեց քայլել, միայն գլուխը չէր պահում՝ պարանոցը չէր աշխատում:

Մեր բակի երեխաները, ինչու չէ նաև մի քանի մեծահասակներ, շատ դաստիարակված են և շատ բարձր գիտակցություն ունեն, որովհետև Սահակիս ծաղրում են, չեն խաղացնում, խփում են, գոռում են վրան, ոմանք անտարբեր են:

Սա ի՞նչ է: Ինչևէ:

Համապատասխան գերատեսչությունից (երեխայի գիտելիքները ստուգելուց հետո) համապատասխան փաստաթղթերի առկայությամբ,

9 տարեկան հասակում, Սահակս սկսեց հաճախել սովորական միջնակարգ դպրոց: Այժմ սովորում է 2-րդ դասարանում և տնային աշխատանքները կատարելիս օգտվում է համակարգչից (ձեռքերը լավ չեն աշխատում՝ գրիչ բռնելու համար, հասկանալի չի խոսում):

Երկրորդ տարում ի վերջո ուսուցիչները հասկացան, որ Սահակս մտավոր հետամնաց չէ: Չեմ ուզում մանրամասնել ու բարձրաձայնել դպրոցի հետ կապված լավ ու վատ խնդիրները, որովհետև վերհիշելուց նյարդերս տեղի են տալիս:

Դասերը պարապում ենք մասնավոր հիմունքներով, ՈւՇՈՒ-ն պարապում ենք մասնավոր հիմունքներով, մերսումները և բուժական ֆիզկուլտուրան կատարում ենք մասնավոր հիմունքներով, բիոտոկերով բուժումները կատարում ենք մասնավոր

հիմունքներով: Լողավագաններում (լողը նրան շատ է անհրաժեշտ) զեղչեր չեն գործում: Պետությունը ոչ մի հարցով «ձեռքս չի բռնում», ես այս ամենը նրա թոշակով եմ անում: Աշխատում եմ օրնիբուն ու արդեն տեղի է տալիս և առողջականս, և ֆիզիկականս, և հոգեկանս:

Այս ամենը իրավունքի խախտում չէ՞:

Չեմ ցանկանա, որ որևէ մայր անցնի իմ անցած ճանապարհով, չեմ ցանկանա, որ որևէ մայր երեխայի հիվանդության «ցավ» ունենա, առավել ևս, երբ անդադար «արհեստականորեն սեղմում են այդ «ցավը»:

Ինքս հայրենասեր եմ և հույս ունեմ, որ ի վերջո Հայաստանը կդառնա գործող օրենքներով և իրավահավասար երկիր:

Ա՛խ, եթե...

Գիշերը, ինչպես միշտ մոտենում էր դանդաղ քայլերով, իսկ ես քնել փորձելու գուր ջանքերից հոգնած, բազմոցին միայնակ նստած անվերջ մտածում եմ, հիշում, կարոտում, ինչ-որ հարցերի պատասխաններ փնտրում, բայց այդպես էլ չեմ գտնում:

Օ՛, այդ դու՞ ես, իմ թախի՛ճ, ինչպես՞ ես, այսօր կրկին իմ հյուրն ես. վաղուց չենք տեսնվել, այնքան պատմելու բան կա իմ ընկեր, որտե՞ղ էիր, ինչու՞ չէիր գալիս, գիտե՞ս՝ քեզ կարոտել էի: Քո գնալուց հետո մնացի մենակ, ոչ ոք ինձ չէր հասկանում այնպես, ինչպես որ դու: Էլ չգնաս, չեմ ուզում մենակ մնալ:

Գլխումս խառնաշփոթ է, ներսումս կարծես ամեն ինչ բար է խառնվել, չգիտեմ ինչ անել: Մենակ եմ, այնինչ մի քանի օր առաջ կարծես ողջ աշխարհը ինձ էին տվել, իսկ հիմա այդ ամենից մնացել են միայն ցավալի հիշողություններ:

Հիշողությու՛ն, ո՞վ գիտե, թե դա ինչ է: Միգուցե Աստծո կողմից տրված շնորհ, կամ տառապանք է գուր, որ խեղդում է շարունակ: Չգիտեի ինչ անել, ում լսել, սրտիս ձայնին, թե բանականությունը: Ասես պայքարի մեջ էին ելել իրար դեմ: Եվ այդ անողոր պայքարում հաղթեց բանականությունը, և կայացրի մի որոշում, որից սիրտս ու հոգիս տառապանքի ու տվայտանքի մատնեցի:

Չգիտեմ, ճիշտ եմ, թե սխալ, գուցե հենց նա էր այն միակը, որ պետք է լիներ իմ կողքին, իսկ ես... Ա՛խ, ի՛նչ դժվար է: Հիմա երևի մտածում ես՝ գժվել եմ: Չէ՛, պարզապես սիրտս փշրվում է ցավից, մի հրաբուխ է ծնվել ներսումս, որն ուզում է ժայթքել:

Առավոտյան շտապում էի հերթական քննության: Արագ քայլում էի, հանկարծ նկատեցի մի երիտասարդի, որն ինձ հետևում էր: Մի պահ մտածեցի՝ համընկնում են մեր ճանապարհները: Սակայն քիչ անց մոտեցավ ինձ և խնդրեց ծանոթանալ: Մերժեցի խնդրանքը, պատճառաբանելով քննությունս: Երիտասարդը չհեռացավ, անընդհատ խնդրում էր, որ գոնե մի բուպե լսեմ իրեն: Երբ մոտեցանք մասնաշենքին, որտեղ պետք է անցներ քննությունը, խնդրեցի, որ հեռանա: Նա համառում էր: Խնդրեց թույլ տամ իրեն ուղեկցել մինչև քննասենյակ: Մերժեցի: Թույլ տվեցի օգնել ինձ բարձրանալ շենքի մուտքի աստիճաններով /քանի որ ինքս դժվարանում եմ բարձրանալ/, պայմանով, որ կհեռանա: Շնորհակալություն հայտնեցի օգնելու համար, փորձեցի հրաժեշտ տալ, սակայն չհեռացավ: Եկավ մինչև քննասենյակ: Մի քանի բուպեից տեղեկացա, որ քննությունը չի կայանալու և հետաձգվում է մինչև հաջորդ առավոտ: Այլևս պատճառ չունեի մերժելու, նրան չլսելու: Մինչև փորձում էի պատճառ հորինել, նա նայելով ինձ, ասաց.

- Հիմա էլ պատճառ չկա, խնդրում եմ մի քիչ զրոսնենք:

Մերժելու մեկ ուրիշ պատճառ էլ գտա, դա էլ չօգնեց: Զգացի, որ համառում է ու տեղի տվեցի: Եվ մենք սկսեցինք քայլել ու զրուցել: Քայլում էինք, զրուցում, խոսքից խոսք էր բացվում, մի թեմայից մյուսին էինք անցնում՝ չնկատելով, թե ինչպես է ժամանակը առաջ սլանում: Հետաքրքիր ու հաճելի զրուցակից էր, երկուսիս նախասիրությունների, ապրած կյանքի մեջ ինչ-որ ընդհանուր բաներ կային: Երբ նայեցի ժամացույցին արդեն երեկոյան ժամը յոթն էր: Հրաժեշտին խնդրեցի, որ էլ չգա: Հաջողություն մաղթեցի և գնացի: Քայլերս ակամա ինձ տարան այնտեղ, որտեղ մայրս էր աշխատում: Ցանկացա պատմել, խորհուրդ լսել, մեղմել ֆիզիկական և հոգևոր

ցավս: Ուշանալուս պատճառը փորձեցի բացատրել, սակայն մինչ դա կանեի, ականջներիս մեջ զրնգացին բարկացած մոռս խոսքերը.

- Բավական է, հեքիաթներ մի պատմիր: Մայրս չհասկացավ ինձ, այդպես էլ չկարողացա պատմել, դուրս հանել ներսումս կուտակվածը և ես մնացի մենակ:

Տանը արցունքներիս ազատություն տվեցի: Լավ է գոնե արցունքներս օգնեցին, որ հոգումս բարձրացած փոթորիկը փոքր-ինչ խաղաղվի; Հաջորդ առավոտ գնացի քննության, նա այնտեղ էր, սպասում էր: Քննությունից հետո զբոսնեցինք: Քայլում քինք, սակայն ավելի շատ լռում էինք, քան խոսում: Երկարատև լռությունից հետո ասաց.

- Շա՛տ ուրախ եմ, որ ծանոթացա քեզ հետ, առաջին անգամ եմ նման իրավիճակում, չգիտեմ ինչպես վարվեմ: Գիտե՞ս, եթե մենք իրար հասկանանք, մեզ մոտ ամեն ինչ ստացվի, և եթե հանկարծ ծնողներս դեմ լինեն մեր միությանը, ապա ես ոչ մի կարծիք հաշվի չեմ առնի և կմնամ քեզ հետ, սակայն եթե հանկարծ այնպես ստացվի, որ մենք իրար չհասկանանք և բաժանվենք, չեմ ուզում, որ հանկարծ մտածես մեր բաժանման պատճառը քո առողջականն է, չեմ ուզում քեզ ցավ պատճառել ուզում եմ քեզ թողնել ընտրությունը, շարունակենք հանդիպել, թե ոչ, ինքդ որոշիր լա՛վ: Վաղը կհանդիպենք և կասես ինչ որոշում ես կայացրել, անկեղծ ասեմ, ես շատ եմ ուզում, որ շարունակենք հանդիպել: Իսկ դու՞: Չգիտեի ինչ պատասխանել, ես էլ էի առաջին անգամ նման իրավիճակում, ինձ համարել էր շատ դժվար, ասացի վաղը կհայտնեմ ինչ որոշում եմ կայացրել: Չեմ կարող նկարագրել, թե ինչ ապրումներ ունեցա այդ գիշեր մինչև լույսը բացվեց: Ինչքան էլ դժվար էր ինձ համար, որոշեցի, որ չենք հանդիպի: Նայելով իրականության աչքերին գիտակցում էի, որ ճիշտ որոշումը դա էր: Ինչու՞ եմ ես վախենում, ինչու՞ եմ փորձում ոտքերիս թերությունը դարձնել չափանիշ: Չգիտե՛մ, չգիտե՛մ...

Գիտե՞ս կյանքից չեմ նեղանում: Նրա շնորհիվ, թեկուզ և կարճ ժամանակով, բայց զգացի, թե ինչքան հաճելի է, երբ լինում ես ուշադրության կենտրոնում, երբ ինչ-որ մեկը մտածում, անհանգստանում է քեզ համար:

Ա՛խ, եթե...

Գրավոր խոսքի թերություններն ու պատճառները

Գրավոր խոսքը դիտվում է մարդու կողմից օբեկտիվ աշխարհի ընկալման և վերարտադրման միջոցներից մեկը: Այն համարվում է ճանաչողական ընթացք, ինչ խոսք նաև հաղորդակցման միջոց: Խոսքի այս տեսակը կայանում է տեսողական, լսողական, շոշափելիքի և շարժողական զգայարանների փոխազդեծության շնորհիվ: Այն կարևոր դեր է խաղում ոչ միայն նրա համար, որ շարադրվում է միտքը գրավոր այլ նաև ունի երկու շատ մեծ առավելություն, դա այն է, որ ոչ միայն գրողը, այլ ընթերցողը նույնպես ունի հաղորդակցվելու նույն հնարավորությունը: Շատ հաճախ գրավոր խոսքը ունենում է մի շարք թերություններ, որ ընդունված է համարել խոսքի պաթոլոգիա (խոսքի ընդհանուր թերզարգացածություն): Գրավոր խոսքի պաթոլոգիան ի հայտ է գալիս հատկապես, երբ երեխան դպրոց է հաճախում: Ծնողներին նոր են պարզ դառնում այն բարդ խնդիրները, որոնք խանգարում են երեխայի աշխարհայացքի ձևավորման գործընթացը ճիշտ կազմակերպելուն: Պարզաբանելով գրավոր խոսքի պաթոլոգիական որոշ տեսակներ, որոնք առկա են մեր հանրակրթական դպրոցներում սովորող ինչպես ֆիզիկապես առողջ երեխաների, այնպես էլ կարիք ունեցող երեխաների մոտ, նկատվում է, որ ֆիզիկապես առողջների մոտ հատկապես վերջին տասից տասնհինգ տարիների ընթացքում դիտվում են տառուսուցման շրջանում բավականին դժվարություններ:

Երեխաները հնչյունա-տառային անալիզ-սինթեզը հստակ չեն յուրացնում: Վանկերը կազմելիս հնչյունը կարող են առանձին արտաբերել, սակայն որպես կապակցված վանկ չեն կարողանում ընկալումից վերարտադրում ֆունկցիան իրականացնել: Շատերը կարծում են, թե հետո կհաղթահարվի, բայց փորձը ցույց է տալիս, որ որքան ուշ է տարվում շտկողական գործընթացը, այնքան գրավոր խոսքում վրիպումները ավելի խորքային բնույթ են կրում: Երեխան, որ ուշ է սկսել խոսել, կամ խոսքը երկար ժամանակ թվատուրությամբ է տառապել, եթե նույնիսկ թվատությունից ձերբազատվել է, ապա առանց մասնագիտական միջամտության գրավոր խոսքի մեջ անպայման երևույթը դրսևորվում է տարբեր աստիճանի խախտումներով: Մտեղծվում է տպավորություն, որ նույնիսկ բանավոր խոսքի ակտիվ հարուստ բառապաշար ունեցող երեխաները հայոց լեզվի գրավոր աշխատանքում չեն կարող բավարար գնահատական ապահովել: Այս երևույթը դիտվում է գրավոր խոսքի մասնակի խանգարում, և եթե ժամանակի ընթացքում ծնողները մասնագիտական լոգոպեդական աշխատանքի մեջ չեն ընդգրկում երեխային՝ կանխելու երևույթը, ապա ֆիզիկապես և հոգեպես առողջ երեխան ծանր ներքին հոգեբանական տրավմա է կրում, որը, ինչ խոսք, անդրադառնում է ոչ միայն վարքի այս կամ այն շեխումներին, այլ նաև երեխայի ֆիզիկական դիմադրողականությանը, և երեխան մանկական, վիրուսային հիվանդությունների նկատմամբ դառնում է խոցելի: Ինչ խոսք, այսպիսի իրավիճակը, բնականաբար, երեխայի ուսումնական գործընթացին, նրա մտավոր զարգացմանը լուրջ վնաս է պատճառում: Ցավալին այն է, որ շատ են դեպքերը նաև տեսադրությամբ տառապող, խնդիրներ ունեցող երեխաների շրջանում: նույնիսկ չնչին աստիզմատիզմը բերում է այնպիսի բարդ հետևանքների, որ կարծիք է ձևավորվում, թե երեխան մեկուսի է, կամ՝

շատ ազդեցիվ, քանի որ տարիների ընթացքում կուտակված պրոբլեմները դառնում են անհաղթահարելի, իսկ մարդը կորցնում է ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակություններն ու կարողությունները: ՏԱրբեր դպրոցներում կատարած դիտարկումները այս կարգի խախտումների վառ վկայություններն են, նույնիսկ բարձր դասարաններում: Ներկայացված գրավոր խոսքի մեջ (տես՝ պատճենահանված օրինակը) թերություններ ունեցող երեխաները չունեն, ինչ խոսք, ինտելեկտուալ շեղումներ, ուղղակի կա կրթական համակարգի, երեխայի սոցիալ-տնտեսական պայմանների փոխգործունեության պատճառահետևանքային կապի խնդիր: Այս երևույթը կարելի է կանխել ցանկացած ժամանակ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ տղա երեխաները մեծ տոկոս են կազմում, իսկ հայրենիքին առողջ զինվորներ են պետք: Մա համարվում է պետեկեն կառույցի կարևորագույն խնդիրներից մեկը. և պետք է պետական ծրագրերը կազմելիս հաշվի առնել այս հանգամանքը: 2002թ.-ից կրթական համակարգում այսօր էլ գործում է ներառական կրթությունը: Թվում է՝ փորձաշրջանն անցել է: Արվել են առաջարկներ, կատարվել փարեփոխումներ կրթական ծրագրերում, ինչպես նաև մշակվել հատուկ չափորոշիչներ, ըստ որի կազմվել են ծրագրեր: Առ այսօր չկան համապատասխան դասագրքեր, որոնք ուսուցչին ուղղորդեն աշխատելու կրթության հատուկ կարիք ունեցող երեխայի հետ: Պետք է ասել, որ եղած ծրագրերից ոչ բոլորն են համապատասխանում հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների առանձնահատկություններին: Չէ որ խնդիրը բխում է «Կրթություն բոլորի համար»

կարգախոսից: Ինչ խոսք, որոշումը ծնողինն է, թե երեխան որտեղ կստանա իր կրթությունը, բայց եթե գործնականորեն աշխատանքը տարվում է չափորոշիչից ելնելով՝ ինչ պահանջվում է, գումարած նաև մասնագիտական շտկողական աշխատանքը, երեխայի ծանրաբեռնվածությունը մեծանում է և արդյունքում էլ դառնում է ոչ գոհացուցիչ: Ծրագիրը պետք է կրկին վերամշակվի, վերանայվի և լինի ճկուն ու մատչելի ոչ միայն դասավանդողի, այլ նաև ծնողների համար, քանի որ ծնողը մանկավարժ չէ և ոչ հատուկ մասնագետ, բայց նա հաշմանդամ երեխայի առաջ տանող շարժիչ ուժն է: Նա ունի մեծ առաքելություն՝ երեխային դարձնել հասարակության լիիրավ անդամ: Վատ չէր լինի այս հարցին տալ վերջնական պատասխան, քանի որ այստեղ նույնպես, հանրակրթության մեջ ներառելով, առաջ են գալիս կրթական չլուծված պրոբլեմներ ու խնդիրներ, որոնք դառնում են մտահոգիչ հարցեր թե՛ ծնողների, թե՛ ուսուցիչների համար:

Հաշմանդամության ուղեղային մանկական տարատեսակ կաթվածները մեր օրերին լրջագույն խնդիրներից են: Կրթական չափորոշիչի հետ կապված պրոբլեմները շատ դեպքերում երեխային կաշկանդված են պահում: Այսպես, օրինակ, երեխան, որը տառապում է այդ հիվանդությամբ, ունի շատ հստակ ընկալում, վերարտադրում, բանավոր խոսքն ակտիվ է, զարգացած, բայց գրավոր խոսքը չի բավարարում պահանջվող չափորոշիչն ապահովելու, այլ կերպ ասած, ընդհանրապես գրել չի կարող, հետևաբար միջին դպրոցի գրավոր քննական առարկաների մինիմալ սանդղակի պահանջը անկարող է բավարարել: Ինչ խոսք, հաղթահարել կարելի է այս կարգի խնդիրները, եթե ճիշտ ու ժամանակին տարվի ռեաբիլիտացիոն (վերականգնողական) բուժական գործընթացը, որը պետք է կրի սիստեմատիկ բնույթ: Հատուկ կարիք ունեցող երեխաների կրթական կարիքները շատ են ու բազմազան, ուստի նպատակը պետք է ուղղված լինի օգնել նրանց, ովքեր չգիտեն (եթե ընտանիքում կա նման երեխա), ինչպիսի մոտեցումներ ու լուծումներ են պահանջվում: Այս հարցում ևս ծնողի պարտականությունն ու դերը մեծ է:

Անկախ այն բանից, թե ծնողը և ընտանիքը հոգեբանորեն պատրաստ չեն իրենց երեխայի կրթական կարիքները հոգալու՝ սերտ համագործակցելով լոգոպեդի, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ցանկացած այլ մասնագետի հետ, միննույն է, ծնողն իր մեջ պետք է հուսախաբության ու հուսալքության արգելքները հաղթահարի, որ կարողանա աշխատել: Ինչպես ժողովուրդն է ասում. «Դառնությամբ ստեղծած պտուղը քաղցրությամբ են վայելում»: Սա միանշանակ պետք է ընդունվի որպես սկզբունք և առաջնորդի բոլորին՝ չերերալ կասկածների մեջ, այլ քայլել առաջ՝ հաղթահարելով բոլոր պրոբլեմները, վայելել կյանքի բերկրանքը: Ոչինչ չի ստեղծվում առանց քրթնաջան աշխատանքի:

- Ապրենք՝ հույսով, հավատով, կլինենք երջանիկ,- այսպես պետք է իր օրը սկսի յուրաքանչյուր ծնող և երեխա: Սա է կյանքի և աշխատանքի իմաստը, ճիշտ ապրելաձևը:

Ինձ գտնելու համար

Ես հաշմանդամ չե՛մ, լսու՛մ եք: Հաշմանդամը դուք եք: Հաշմանդամը նրանք են, ովքեր այդ բառն օգտագործում են իբրև ապրանքանիշ, տեսակի անվանում: Հաշմանդամը նա է, ով զգում է իրեն այդպիսին: Ես այդ տեսակից չեմ, ես մարդ եմ, անհատ՝ եզակի, անկրկնելի ինչպես որ դուք, և ոչ ոք իրավունք չունի ինձ պիտակավորելու:

«Ամեն մարդ մի տիեզերք է», -ասում են, իսկ մի՞ թե առանց աչքի կամ ոտքի տիեզերքը դադարում է տիեզերք լինելուց:

Այս է իմ առաջին անմիջական արձագանքն այդ հաշմանդամ բառին: Սակայն հետո, երբ բանականությունս իշխում է զգացմունքներիս, ի վերջո, ընդունում եմ, որ այնուամենայնիվ՝ ես հաշմանդամ եմ: Եվ ամենագորեղ համոզողը կյանքն ինքն է: Նրա անհերքելի ապացույցների ճնշման տակ, իմ մեղավորությունը ճանաչող հանցագործի պես խոստովանում եմ՝ ես հաշմանդամ եմ: Եվ ինդրում ու պահանջում եմ՝ դատապարտեք ինձ: Դատապարտեք և՛ միայն մահվան, քանի որ նույնիսկ տասնհինգ տարվա բանտարկությունից հետո, միևնույն է՝ ես կլինեմ հաշմանդամ: Իսկ եթե չեք դատապարտում մահվան, ուրեմն՝ մի դատապարտեք ընդհանրապես և այնպես արեք, որ ապրեմ քիչ թե շատ մարդավայել կյանքով:

«Լավ է կույր աչոք, քան կույր մտոք», -գրվել է մեզնից առնվազն երկու հազար տարի առաջ: Եվ սա սև սրտի վարդագույն մխիթարանք չէ, բնավ: Սա նշանակում է, որ դեռ այն ժամանակ, երբ չկային մարդու իրավունքները պաշտպանող հոչակագրեր ու կազմակերպություններ, մարդիկ գիտակցում էին, որ ֆիզիկական արատը չի զրկում մարդուն իրավունքներից:

Իսկ այժմ, հարցնում եմ՝ քանի՞ աչքով կույր կա մեր իշխանության մարմիններում ներքնից վերև... Իսկ քանի՞ մտքով կույր...

Սակայն ինիչի՞ մասին է խոսքը, երբ կույրերը դուրս են մղվում նույնիսկ իրենց համար սովետական տարիներին ստեղծված ձեռնարկություններից: Դրանցից մի քանիսը դեռևս գոյատևում են, բայց դրանցում համեմատաբար բարձր աշխատավարձով մնացել են առողջ մարդիկ: Ձևի համար պահվող մի քանի կույրերին տրվում են հիմնականում ցածր վարձատրվող ու դժվար աշխատանքներ, էլ չասած ծանր նվաստացուցիչ պայմանների մասին: Եվ այդ տաժանակրությունը, պատկերացրեք, նրանք ընդունում են հոժարակամ, որովհետև, ինչ էլ լինի, չնչինը գերադասելի է ոչնչից:

Պետությունը վաղուց որդեգրել է ինտեգրացման քաղաքականություն ու ձեռք քաշել նման ձեռնարկություններից՝ ո՛չ աջակցում է, ո՛չ վերահսկում: Իսկ այդ ինտեգրացման արդյունքում քանի՞ հաշմանդամ, մասնավորապես կույր է աշխատանքի ընդունվել առողջների միջավայրում: Ինչքան գիտեմ՝ ոչ մեկը:

Հաշմանդամի ուզածն աշխատանք է՝ իրեն մատչելի աշխատանք: Ինտեգրման և ինքնադրսևորման գլխավոր նախապայմանն այդ է:

Չկա՝ գիտեմ: Պետությունը նման հնարավորություններ չունի՝ հասկանում եմ: Բայց եկեք հանգամանքներին նայենք իրապաշտորեն և այսպիսի մի համեմատություն թույլ տանք մեզ:

Պետությունն ամենաձանր հանցագործին անգամ այլևս չի ոչնչացնում, քանի որ դարձել է ավելի մարդասեր: Փառք ու պատիվ նրան, ճիշտ է անում՝ ամենաձանր հանցագործն էլ մարդ է ինձ, քեզ, նրա պես մարդ: Փոխարենը՝ ցմահ զրկում է ազատությունից և ցմահ ապահովում հացով ու ջրով, օճառով ու դեղով, հագուստով ու տաքությամբ: Իսկ հաշմանդամը, որն առանց բանտարկության էլ զրկված է ազատությունից, ի՞նչ անի ինչպե՞ս անի, երբ պետության՝ իր իրավունքների երաշխավորի տված թոշակը շատ քիչ է հացի ու ջրի օճառի ու դեղի, հագուստի ու տաքության համար: Փաստորեն, ստացվում է, որ հանցագործ լինելն ավելի ձեռնտու է, քան հաշմանդամ:

Ես ոչ ոքի չեմ մեղադրում, բայց ինչ-որ տեղ ինչ-որ բան, իսկապես, սխալ է:

Ինձ գտնելու համար փնտրիք անձրևի մեջ,
Նաև՝ ամռան այրող արևներում,
Փնտրիք թռչունների երգերի մեջ
Եվ անտառի կանաչ սոսափներում:

Ինձ գտնելու համար փնտրիք գրքերի մեջ,
Նաև գինու թաղած տակառներում,
Փնտրիք ազգիս տխուր հուշերի մեջ
Ու գալիքի մոլոր ճամփաներում:

Ինձ գտնելու համար փնտրիք շունչն այն մաքուր,
Որից բոցկլտում էի ու կյանք առնում,
Փնտրիք ինձ ուր կուզեզ, փնտրիք ինձ ամենուր,
Միայն մի փնտրիք ինձ երբեք ինձնում:

Բարձրահասակ, թիկնեղ մրահոն աչքերով մի գեղեցիկ երիտասարդ էր կանգնած ինստիտուտի առջև: Հաճելի էր նայել ու հիանալ գեղանի օրիորդներով: Բայց այն մեկը... Ինչու՞ այդքան երկար նայեց նրա ետևից... Աղջիկը, ասես, սովեր լիներ. վայրկենապես անհետացավ:

Մի օր տղան համարձակ քայլերով մոտեցավ ու ողջունեց աղջկան: Աղջիկը զարմանքից քար կտրեց:

-Այդ դու՞ ես, Ս...:

Տղան էլ ճանաչեց: Նրանց մանկությունը միասին էր անցել: Իսկական հրաշք: Այն մի մատնաչափ աղջիկը վարդի պես փթթել ու քնքշացել էր: Նուրբ էր այդ փոքրիկ արարածը, բյուրեղապակու պես փղրուն ու եթերային:

-Քեզ ի՞նչ է պատահել: Ինչու՞ ես այդպես, - հազիվ կարողացավ հարցնել աղջիկը: Ու տաղան պատմեց, թե ինչպես այն մութ ու ցուրտ տարիներին էր լույսերը հավաքվում էին իրենց նկուղում: Ջրուցում էին, կատակում, իհարկե, գլուխգործոցը Ս...ն էր: Նա այնքան էր ծիծաղեցնում, որ քիչ էր մնում ուշաթափվելին:

Մի օր էլ նա «լիմոնչիկ» էր բերել, որ ցույց տար ընկերներին: Նրանք չէին հավատում, որ դա իսկական է: Այդ պահին լույսերը անջատեցին:

Ս...ը գոչեց, - տղե՛րք, փախե՛ք, հիմա կայայթի: Բնականաբար ոչ ոք չհավատաց, մտածեցին՝ հերթական կատակն է: Նա զգաց, որ պահը ճակատագրական է դառնալու ընկերների և իր համար: Արագ կողմնորոշվեց, «լիմոնչիկը» սեղմեց փորին և ուզում էր փախչել, որ ընկերները չվնասվեն:

Չարաբաստիկ ականը պայթեց ու խլեց երիտասարդի մի դաստակը, ամբողջ դեմքը աղավաղվեց բեկորներից: Մի վայրկյանում նրա բնատուր գեղեցկությունը դարձավ...

Որոշ ժամանակ անց տղան ամուսնության առաջարկ արեց աղջկան: Աղջիկը երկընտրանքի մեջ էր: Մի կողմից նրանք մանկուց մեծացել էին որպեսս քույր ու եղբայր: Մյուս կողմից՝ սիրտը թրթռում էր...

- Մի շտապիր, լավ մտածիր, ես կօգնեմ, որ դու հաղթահարես քո մեջ տիրող խառնաշփոթը: Մենք միասին ուժեղ կլինենք: Միայն մի խնդրանք. հանկարծ չխղճաս ինձ: Դա ինձ կխոցի: Եթե ինձ չընտրես, կգա մի ուրիշը, որ ավելի ամուր ձեռքեր ու սիրուն աչքեր կունենա՝ չխաբվես տեսքին: Կընտրես քեզ արժանավորին, որովհետև դու անչափ լավն ես ու համեստ: Ես գնում եմ, ու հիշիր, որ կապրեմ ընդմիջտ քեզ սիրելով...

Միրելի՛ ս...

Աղջիկը կարկամել էր, կարծես օդում լիներ: Նա շաբաթներ շարունակ չէր կարողանում ուշքի գալ: Անհամբեր սպասու ու կարոտում էր տղային: Բայց տղան չեկավ: Նա հպարտ էր, չէր ուզում ճնշել աղջկան ու սպասում էր:

Այդպես էլ աղջիկը ուժ չգտավ իր մեջ տղային ետ կանչելու:

Ամեն անգամ նայելով երկնակամարի, նա տեսնում էր երկու բոցավառ աստղերի, որոնք իրար շատ մոտ էին, բայց իրարից շա՛տ հեռու: Ակամայից հոսում էին արցունքները: Նա համոզվում էր, որ արցունքն իրոք ծովի համն ունի ու խորհուրդն ունի փոթորկված ծովի...

Ապրելու տենչ

*(Փառաբանումներս միշտ առ Աստված են,
Ինչուներս չունեն հասցեատեր...)*

Աստծո տրված ամենամեծ պարգևը կյանքն է, որ հաճախ բեկվում է կամ մատուցվում է բեկված: Ո՞րն է ավելի դաժան. բնավ չունենալ զանձն երազած, թե՞ ունենալ ու կորցնել: Վիճելի է այնքան: Մարդկանց ոգիները մեղմ ու կախարդական խոսքերով բացվող դարպասներ ունեն, իսկ պարտադրանքը փշրում է այն: Երբ հարցը վերաբերմունքի մասին է, առանձնահատուկը սիրո մայրն է, միևնույնը՝ անտարբերության: Ամեն դեպքում, ինչպես ժողովուրդն է ասում, վերքը տիրոջն է ցավ պատճառում: Իսկ առողջ հասարակության խնդիրներից է նաև ուրիշի ցավը սեփականացնելն ու ապաքինելը: Այլապես անտարբերության տրիոյթում ամեն ինչ աղետալի է ու կործանարար:

Բախտի հեզնա՞նք ասել, թե՞ ճակատագիր. ես հայտվել եմ մի կիզակետում և վավերացնում եմ կյանքն ինչպես որ կա: Քաղաքս, որ այնքան գեղեցիկ էր ր անխաթար էր թվում, այն չէ այլևս, և ես էլ չեմ քայլում փողոցներով նրա: Չեմ քայլում: Անցնում եմ...: ցավի մասին չեն գրում: Գիտեմ՝ չեն գրում: Բայց երբ այն ահագնանում է, դառնում է տանջող, դիվային՝ այլոց անտարբերության պատճառով, և անգորության անտես ու ահարկու ճիրաններն շնչահեղձ

են անում, ոչ թե գրել այլ գոչել է պետք: «Երեխան մինչև չլացին» այս դեպքում ծեծված է, ավելորդ, երբ «մայրը» ընդհանրապես չկա: Անցած այսքան տարիներն, որ մի ողջ կյանք է, գրեթե ոչինչ չփոխեցին հոգսերից ճկված իմ քաղաքում: Անսպասելի ցնցումներից խաթարվեցին նաև հոգիներն մարդկանց: Անցնել գեհենի միջով, հազար անգամ մազապուրծ լինել մասհվան ճիրաններց, ուժ գտնել կառչելու կյանքից և անգամ պայքարել, ըմբոստանալ, փորձել փշրել անտարբերության անկործան թվացող դարպասներն, անբախտության ծանր դասերում իսկ կարողանալ երջանիկ պահեր կորզել կյանքից՝ իրոք, մեծարանքի է արժանի: Բնավ չտրվել հորձանքին: Ամեն ինչից և ամենքից բարձրանալ- բարձրանալ... Բեկված ճակատագրեր, սահմանափակ կարողություն, հաշմաննդամություն. ինչ անուն էլ տրվի, միևնույն է, խնդիրները առկա են, հաճախ բազում և անլուծելի: Մինչդեռ պետության լիարժեք հոգածությունն իսկ մեծ շրջադարձ կկատարեր շատերի կյանքում: Բայց, ցավոք, ամեն քայլափոխի խախտված իրավունքներ են. ազատ տեղափոխվելու, ուսման, հարմարեցված տարրական պայմանների, աշխատանքի, հասարակական միջավայրի մատչելիության, բժշկական սպասարկման, լիար-եք կյանքով ապրելու:

Ծրագրեր ու որոշումներ, խոստումներ անվերջ. ջուր ծեծելու նման: Իսկ արդյունքն ում....

Մեր քաղաքում կասեին,- Հեչ չեմ սիրե, որ կըսեն ուչեն էնե....

Ու մինչ չգիտեմ որտեղ, չգիտեմ ովքեր բարձրագոչ ճառեր են արտասանում և ինքնբզոհ տեսքով անվերջ հարցերի լուծումներ են արձարծում, շատ-շատերերն հուսահատ ու ճարահատ, ամեն ինչից զրկված, բանտված իրենց խղճուկ

կացարաններում՝ սպասում են չնչին կենսաթոշակին: Ղեկավարներից մեկն էլ փայլուն միտք հղացավ.

«Հաշմանդամին արտոնություններ պետք չեն, այլ շատ փող է հարկավոր»: Եվ ստացվեց սև հումոր: Արտոնություններն հանեցին, իսկ փող այդպես էլ՝ չի՛ք: Եվ հաշմանդամը մնաց բազային կոչված կենսաթոշակի ողորմելի մի գումարով, որ տարական կարիքներն իսկ կբավականացնի երեքից չորս օր միայն (լավագույն դեպքում):

Գիտակցել, որ ողջ կյանքի ընթացքում մի ծանր բեռ ես ընտանիքիդ, հարազատներիդ համար և կախում ունես նրանցից ցանկացած պարագայում՝ դժվար է անշուշտ: Դժվար է հատկապես, երբ ապրում ես աղետ տեսած Գյումրիում: (Խնդրում եմ՝ չմատնանշել Ավստրիական թաղամասը, քանզի այնտեղ անվաթոռին գամված ընդամենը մի քանի հաշմանդամներ են ապրում փոքրիշատե բարվոք պայմաններում): Ապա փորձեք անվաթոռով անցնել քաղաքի ծայրամասին քար ու քանդ, ավեր փողոցներով՝ առանց որևէ մեկի օգնության: Ավելի հեշտ է, ֆորդ-Բոյարդի փորձություններն հաղթահարել, քա՛ն...

Եթե խորհրդային ժամանակներում հատուկ կարիք ունեցողներին ավտոմեքենա էր հատկացվում, որ ոչ թե ճոխություն, այլ ընդամենը անհերաժեշտություն է ապա այժմ այդ մասին մտածելն իսկ անհասց երազ է, Մարս թռչելու պես մի բան:

Ում հասու չէ դիմացինի տառապանքը՝ պատճառներ կթվարկի: Տեղին է ասված. «Ցանկացողը հնար է փնտրում, չցանկացողը՝ պատճառներ»: Մեծ գիտելիքներ պետք չէ: Ընդամենը տարրական հասկացություն և բարի կամք է հարկավոր՝ ձեռք մեկնելու, սատարելունրանց, ուլքեր զգում են աջակցության կարիք: Զգալ ահավոր խավարի հավերժական անթափանցելիությունը, գամված լինելու տաժանությունը, քար լռության ծանրությունը, հաղորդակցվել չկարողացողի անգորությունը: Զգալ և գթալ: Բարությանը մեղմել ցավերն ուրիշի: Ինձ համար այնքան դժվար է գրել: Անչափ դժվար է: Ներսումս քառս է, փոթորիկներ: Ձեռքդ դիր, այ այստեղ: Տես ինչպես է մրրկանում իմ մեջ կատարյալ անգորությունը, մարդկային վեհությունն ու կարիքը, ձգտումն ու ցավը, կարոտն ու անհասունությունը, դաժան իրականությունն ու քաղցր խաբկանքը:

Երազներին հասնելու թեվահատ հարցականների խառնիխուռն երամներ մոլորվել են այս քառսի, երկնայինի ու երկրայինի միջեվ եվ օդանցք են որոնում: Դժվար է, ահավոր... Գարնանային թարմաշունչ մի նոր արթնացում է հարկավոր: Այսպես եմ ուզել ասել բոլորին.

-Ե՛կ, ծաղկենք կրկին: Ո՛վ գիտի, օրն ինչ անակնկալներ է թաքցրել իր անտես ծալքերում: Եվ ապրելու տենչն ինձ առաջ է մղում:

Գրել պայքարի դրոշին, Երջանկության հաղթությունե՛ եվ առաջանալ: Զմայլանքի պարտեզները մեզ սպասում են դեռ:

*Գրելը պետք է խոստովանություն լինի, իսկ խոստովանությունը պահանջում է մեծ
ազնվություն
Նիկոլ Աղբալյան 1873 մայիս 24*

Գլխիս հասած պատուհասի արձագանքը

Արվեստի շնչով, գիտության լույսով, թվային մտածողության ոլորտում հայտնվելով՝ և պատահականորեն գտնելով տիեզերքի խորհրդավոր անեզրում թաքցրած գանձերի թաքստոցի՝ մեսրոպյան այբուբենի ծածկագրի բանալին, մեծ էր զարմանքս և անսպասելի...

Աշխարհընկալման նոր գիտակցությամբ՝ գաղտնագիր քողարկված բառերի լույսով, չբացահայտված գաղտնիքների նորանոր բացահայտումներով՝ գտնվելով տիեզերքում բարձրագույն մտածողությամբ օժտված, բանական զարգացած մարդկանց՝ այլմոլորակայինների, խարհրդավոր լույսի խորհրդի կապը համաշխարհային մշակույթի հետ, ինչպես նաև ճանաչելով, թե ով է հայր, և թե ինչու է մեր գիրն ուրիշ գրեն՝ գլխիս պատուհաս դարձավ...

Անմեղ զոհի հոգևիճակով՝ հոգեբուժարանում վանդակելով, թե ինչքս թոցրել եմ, (որին տեսանելի էր իրական ապագան արվեստի լույսով ողողված) ցմահ տրված հաշմանդամությանս ախտորոշման պատճառը դարձավ: «Գժի» պիտակի նոր կարգավիճակով, որը (կապված լինելով ուղեղի, բայց ոչ ուղեղային հիվանդության հետ) ի վերուստ տրված շնորհիս՝ բախտիս նվերն էր դառն ճակատագիրս...

Ի՞նչ է հաշմանդամությունը... Բախտ, ճակատագիր, աստծո պատիժ, անեծք, թե՞ բարձրյալի կողմից առաքված մի ժառանգություն՝ ի վերուստ տրված մի շնորհ, ժառանգորդի նոր հոգեկերտվածքի իմ հոգեվիճակով՝ նոր փոփոխություն, որը տառապում է իրական կյանքում իր շրջապատում դեռ չհասկացված՝ իր ծպտված զգացմունքներով, ճակատագրի «կյանքի գրքի» պատռված մի էջի՝ խեղված իր կյանքի բարդույթից ստացած նոր ժառանգությամբ...

Հաշմանդամության խնդրի լուծման հետ կապված բանաձևի՝ ձևաչափի իմ մտորումներով, ասելիքս ավելի ընդգրկուն դարձնելու նպատակով, կփորձեմ «հաշմանդամություն» բառի «հաշ» բառիմաստի ստուգաբանման իմ տարբերակով մեկնաբանել տեսակետս:

«Հաշ»-ը դիտելով որպես երկրաչափական մարմինների բարձրության չափման միավորին (h) համապատասխան՝ մարդու հոգեվիճակի նոր փոփոխությանը համարժեք, մարդկային աննկուն ոգու թռիչքի բարձրության չափանիշ՝ և այլն կապելով մարդու՝ ազատարար մտքի, ստեղծագործ, համառ, քրտնաջան աշխատանքով, մեղվի ջանասիրությամբ՝ իր կյանքի իմաստը վերաիմաստավորելու ձգտում՝ (օրինակ - Ալեքսեյ Մարեսև) աշխարհին նայի ոչ թե իր խեղված կյանքի պատռված մի էջի պակասի խնդիրներով, որ հիվանդ է, կամ վիշտ ունի, այլ մաքառելով և ինքն էլ ազատվելով այդ բարդույթից, իր պոկված էջի նոր չափանիշի իմաստավորման հաղթելով ճակատագրին, գտնի իր կյանքի լուսավոր ճամփան, իր կյանքն ավելի հետաքրքիր դարձնելով և զարմացնելով, թե՛ իրեն և թե՛ ուրիշներին:

Ավարտելով իմ իրական կյանքի պատմությունը, վերջաբանը դարձնելով սկիզբը՝ պատմությանս շարունակության...

Ցավով պիտի նշեմ, որ ինձ ավելի շատ զարմացնում և զայրացնում են աշխարհի բոլոր հավատացյալները (քրիստոնյան, մուսուլման, թե բուդդիստ), որոնք արդի գիտության դարում մի մեջ խարխափելով և իրական լույսը չտեսնելով, իրենց իսկ ձեռքով՝ շղթայելով իրենց ազատությունը, (ի տարբերություն ինձ, որ հերթական անգամ կարող եմ հայտնվել հոգեբուժարանում՝ հաշմանդամությանս բարաթով) իրենց հավատքի՝ տգիտության զոհը դարձած, թեև հաշմանդամության խնդիր չունեն, իրականում քողարկված հաշմանդամներ են: Ահա որն է հաշմանդամության խնդիրը... և ովքեր են հաշմանդամները...

Հենակներով աղջիկը

Լուսինեի դալուկ շուրթերին դողում էր «Դլե յամանը», որ կարոտից այրվող իմ սիրտը քաշում էր դեպի հայրենի օջախ՝ իմ դառը մանկությունը:

Գործերս շատ են, ի նչ անեմ, ինչպե՞ս չգնամ, ախր մխում է նա թաց, մխում է անվերջ ու չի մոխրանում: Չէ, պետք է գնամ, մի փոքր կրակ տամ մարած հույսերին, որ կրակով լցվի ու նորից ժպտա աշխարհին: Եվ բոցի կապույտ թրթռներն առած՝ շտապում եմ գյուղ:

Դիմավորում է ինձ դարպասի մոտ՝ հենակներին սեղմված, թախծոտ ժպիտը դեմքին: Սուրճն ուղեկցվում է ջերմ գրույցով: Քամին բաց պատուհանից պոկում է նրա խոսքերի, ծիծաղի բեկորներն ու տանում, խառնում երկնքի առկայծող աստղերին, աստղեր, որոնք իջել թառել էին նոր ասեղնագործած կտավին, որից բերկրանք, շող էր կաթում, լուսավորում փոքրիկ սենյակը:

- Ինչպե՞ս ես արձագանքում հայտարարված մրցույթին,-մի պահ ուշադրությունս շեղելով կտավից՝ հարցրեց նա:

- Ձա՛նս, որոշել եմ քո մասին գրել, դու հրաշք ես, քո ձեռքերը աստղաբույր են, ստեղծածիդ վրա մի տաք կարոտ կա, մի նուրբ քնքշանք, անբացատրելի հմայք:

Մի թեթև կարմրություն սահեց նրա դալուկ դեմքով:

- Շնորհակալ եմ,- շնջաց նա՝ վտիտ ձեռքերը սահեցնելով ուսիս վրայով:

Նայեցի նրան, ձեռագործին: Աստղերի գրկում գույն-գույն ծաղիկներ էին: Շողում էր կտավը աչքերիս առջև, իսկ կողքիս դողդողում բախտի սև խաղից թեքված, ժամանակից շուտ թոշնած մի ծաղիկ: Նրա քնքուշ դողը, աստղերի խոռվքը փոխվում էր արարման տողի: Պայուսակումս ծվարած փոքրիկ գրքույկը հանեցի, սկսեցի գրել:

- Ուզո՞ւմ ես երգեմ քեզ համար...

Շտկելով կորացած մեջքը, հենակները մի կերպ իրենից հեռացնելով՝ հենվեց դռան մուտքի մոտ դրված հնամենի բազմոցին: Սկսեց երգը: Հուզմունքից կարկամել էի տեղումս: Աստվա՛ծ իմ, ինչու՞, ինչու՞: «Դլե յամանը» գրնգում էր գիշերվա սառը օդում, փշրվում դրսում սրտացող ծառերի գազաթներից, փշրվում ցավից կծկված իմ սրտում: Եթե ուժ ունենայի, կնստեի մինչև լուսաբաց, կլսեի նրա շուրթերից հնչած աստվածային երգերը, անվերջ կդիտեի նրա ասեղնագործած բոլոր կտավները: Չէ՞ որ այդ բոլորի մեջ տեսնում էի նրա աննկուն կամքը, մի քիչ էլ իմ օրերի ջահելությունը: Քանի-քանի անգամ այս տան պատշգամբում, երբ Լուսինեն օրորոցում անհանգիստ լալիս էր, ես սպասում էի սարից տուն եկող ոչ միայն նրա հայրիկին, այլ նրա հետ տուն շտապող նշանածիս:

Հուշեր, հուշեր: Չկան մեր սիրելիները: Լուսինեի կողքին եմ, ցրտին՝ հուր, վշտին՝ քույր, հոգուն՝ լույս: Ինչ լավ է ասված. «Մեզնից յուրաքանչյուրը բավական ուժ ունի ուրիշի դժբախտությունը կրելու համար»:

Ապրում է Լուսինեն Վայոց ձորի գեղատեսիլ գյուղերից մեկում՝ Արտաբույնքում: Չորս կողմը սարեր են: Սարերի մեջ վշտում է հավերժորեն թախծող մի գետ, որի ափին թառել է որբացած այս տունը՝ մեջը խորունկ հառաչներ, անժամանակ մահեր:

Այս տան մեջ է մեծացել ողնաշարային արատ ունեցող դալկահար աղջիկը: Բժիշկները չկարողացան օգնել: Հույսը, հավատն է պահում նրան: Այժմ ապրում է, ստեղծագործում՝ հոգու կրակը փոխանցելով ձեռքի հրաշքներին:

Առավոտները, միշտ նույն ժամին հենակներին սեղմված, մտնում է հայրական այգին, հիանում իր աճեցրած ծաղիկների գույներով, վայելում նրանց անուշ բույրը և հետո սկսում է ասեղնագործել: Վշտից մի բուռ դարձած մայրը նայում է, թե ինչպես աղջիկը մինչև ուշ գիշեր, ուժերի վատումով, իր հասակակից ընկերուհու համար օժիտ է պատրաստում՝ նախազարդ սփռոցներ, փոքրիկ անձեռոցիկներ՝ իր էությունից, իր սրտի այրոցքից կայծեր տալով ստեղծած գործերին:

Որտեղի՞ց այս հրաշագործ ուժը, որտեղի՞ց այսքան կրակ ու հոգի այս փխրուն մարմնի մեջ: Հա՛ գիտեմ, դա գալիս է իր գորգագործ Թամար տատիկից, սրնգահար Արամ պապիկից, իր շնորհալի ծնողներից, հայրենի գյուղի սրտի տրոփից:

Լուսինեն ծնվել էր սիրելու և սիրվելու, մի պարզ օջախի հարս, կրակ դառնալու համար, բայց, ավա դ, կյանքի դառը խաղը կիսատ թողեց նրա երագները:

Անցնում են գույգերը, անցնում են մարդիկ տան առջևից՝ խինդ ու ծիծաղ շուրթերին, փույթ չէ, Լուսինեն ապրում է ամենքի հետ, ամենքի կողքին, խոնավ հոգին խարստվում է արևից, աստղերից, հարազատների գուրգուրանքներից, մարդկանց ջերմ հայացքներից:

2007թ. Եղեգնաձորում կազմակերպված «Ես մենակ չեմ» ցուցահանդեսին Լուսինեի ասեղնագործած կտավը գրավեց շատերի ուշադրությունը: Պարսիկ վարորդը, որը հայ ընկերոջ հրավերով եկել էր այս հնամենի երկիրը տեսնելու, երկար ժամանակ հայացքը չէր կտրում սփռոցից:

Կարո՞ղ եմ գնել,- մի կերպ հայերեն բառերը շաղկապելով իրար՝ դիմեց նա աղջկան:

Մի տեսակ նախանձով լցվեցի իրանցի այս երիտասարդի հանդեպ, որը իր հետ տարավ ոչ միայն հրաշք սփռոցը, այլև հայուհու՝ գեղաչա աղջկա՝ հիացքով ու բարեկամությամբ լի հայացքը:

Աշուն է, տերևաթափ, իսկ ես գարնանային տրամադրությամբ գրում եմ այս հոդվածը: Տողերս լցված են հավերժող այս աղջկա ոչ թե հառաչով, այլ լինելիությամբ, արարելու, ստեղծելու իր մշտավառ տենչանքով, երագներով, կարոտով:

Ու գիտեմ Լուսինեի, ինչպես նաև նրա նմանների կյանքը, օրն ու րոպեն գնում խառնվում է «...այն թանկագին ջրին, խիճ ու շաղախին, որով կերտվում է քո հայրենի երկիրը, քո կյանքի գիրքը...»:

Խորհրդածություններ

*«Մի լինի կյանքում մեծ ծանրություն, աշխատիր լինել ծանր մեծություն»
Ավ. Բասիակյան*

Կյանքում կան երևույթներ, պահեր, որոնք վայրկյանների ընթացքում կարող են խեղել մարդուն, շեղել նրան աստվածային անխախտ օրենքով սահմանված ուղուց, և թվում է, մարդ անդարձ կորցրել է ամեն ինչ, և նրա համար կյանքն այլևս անհիմաստ է, անհրապույր:

Ճանաչում էի նրան, այդ ժպտադեմ ու դեռատիկ կնոջը և կարծում էի, թե բախտավոր է. չէ, որ ուներ ամեն ինչ և նրան մի բան էր պակասում...

Ձմեռ էր, նոր էին լռել առունները, չորացել ` մարգերը, երբ ... երբ երկինքը որոտաց և որոտմունքից ասես փուլ եկավ մարդկանց գլխին: Լռեցին երգերի և ուրախության զվարթ ձայները: Շուրջը ամեն ինչ վերածվեց անկյանք գորշության` լի քաղցր օրերի անանց կարոտով, շքեղությամբ շենշող:

Մեկը մյուսի ետևից անցնում էին օրերը` հյուսելով իրենց սառն ու անտարբեր շղթան: Անձուկ պատուհանի ետևից նա զգում էր դրսում եռացող կյանքի` հնքը, և սիրտը լցվում էր անցած օրերի կարոտով, թախիծով:

Հույսը վշտերի քույրն է հավատարիմ: Հուսահատ կնոջ հույսը նորոգվում էր և կամաց – կամաց կերպարանք առնում: Ցրվում էր նրա հոգու մառախուղը, և կյանքը ձգում էր վե՛ր, դեպի վե՛ր: Նա վանեց բոլոր մութ ու մռայլ խոհերը, քանզի նոր լույս էր բացվում խավարին ընդդեմ: Նրա հոգում անմար կրակներ էին մնացել, որ բորբոքում էին սերը հարազատների, հատկապես սաղափերանգ վարսերով ծնողների նկատմամբ, որոնք այն օրերին կարիք ունեին ամոքելու իրենց վշտատոչոր սրտերը, բուժելու վերքերը:

Կարծես ի վերուստ այդ կնոջ համար նոր կյանք սկսելու խորհուրդ էր պահված, որի պատկերն ուրվագծվում էր ուղեղում և շջնում նրան` ապրե՛լ ու ապրե՛լ:

Ահռելի արհավիրքը թեև տակնուվրա էր արել նրա կյանքը, բայց ջահել հոգին ու կամքը հաղթեցին:

Տառապողների և հուսահատների Աստվածը ուժ տվեց նրան` թիավարելու հոսանքն ի վեր, որը ճակատագրի քմահաճ պարտադրանքն էր: Նա ոչինչ համարեց ահեղ հարվածն ու ի հեճուկս անողորք ճակատագրի, սկսեց գործել ու ապրել լիարյուն կյանքով, ավյունով, լույս դառնալ ողջ էությանբ ու Դանկոյի նման լուսավորել խավարում խարխափողների ճամփան` նրանց հանելով լուսավոր ափ: Նա ցրեց մարդկանց ճակատի ամպերը, վանեց թախիծն ու տրտմությունը, քանի որ դրանք այլևս չէին պատշաճում համարձակ ու տոկուն կնոջը: Նա գործում էր անվրեպ: Նրա կացարանը դարձավ այն կիզակետը, ուր սփոփանք ու գորով էին փնտրում դառնացած սրտերը:

Հոգով արի այս կինը ողջույն հղեց աշխարհին: Նա երբեք չէր մտածում այն մասին, որ կորցրել է ամեն ինչ: Առավել մտածում էր , որ կյանքի մնացած օրերը չանցնեն անհիմաստ ու դատարկ: Տիկինն իր լուսեղեն էությանբ բալասանեց բոլոր վիրավոր հոգիները ` դարձնելով նրանց բարեպաշտ, մարդասեր ու բարեգուր:

Այդպես լցվեց նրա դատարկ թվացող կյանքը:

Նա կամուրջներ կապեց հեռավոր ափերում, լուսավոր մարդկանց հետ: Գալիլիս էին ու գալիս մարդիկ՝ տեսնելու կյանքին մարտահրավեր նետած առասպելական կնոջը, որը հաղթել էր անհավասար մարտում: Ավելին, կյանքով լեցուն այս կինը նոր կյանք պարգևեց և գոյության կոչեց մի նոր կյանք ևս: Հույսի ու հարության նոր ընձյուղ, դալար մի շիվ:

Հիրավի, առասպելական փյունիկի նման, որպես լուսակիր էակ, նա թափահարեց իր թևերը, ոստնեց ու հառնեց, որպես լուսեղեն ոգի, որի առկայծուն լույսերի մեջ խայտում են հաշմված անմեղ մանուկները՝ վառելու իրենց հոգու ճրագները:

Գվվո՞ւմ, փեթակի նման բզգում է «Փյունիկը»՝ սփռփանքի ու հույսի, անկեղծ բարեկամության պատմությունն հյուսելով իր մասին:

Աստվածային երթ ու խոյանք «Փյունիկ»-ին: